

03.01.2023 թ. Երևան

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին՝
ՀՀ քաղաքացի Հովհաննես Բագրատի Հովհաննեսյանից
Բնակության և ծանուցման հասցե՝
ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 11 փող., 18/1 տուն

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի պարոն Սարգսյան

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ և հավաքի ղեկավար:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. Հավաքի վայրը՝ Երևան, Մատենադարանին կից տարածք
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2023 թ. հունվարի 31-ը, փետրվարի 01-ը, 02-ը, ժամը 00-24:00-շուրջօրյա
3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի ներքաղաքական հարցերի քննարկում
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 1000, պահպանելով համավարակի հետ կապված բոլոր օրինական պահանջները:
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ դրոշներ, պաստառներ, վրաններ, պլաստիկ սեղաններ և աթոռներ, հովանոցներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր:
6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 մարդ:
7. Հավաքի ընթացքում (ժամը 18:00-21:00) նախատեսվում է երթ՝ Մատենադարան-Մաշտոցի պող.-Սայաթ-Նովա պողոտա-Աբովյան փողոց- Հանրապետության հրապարակ- Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Մատենադարան երթուղով:
8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝
Ազգանուն, անուն, հայրանուն՝ Հովհաննես Բագրատի Հովհաննեսյան
Նույնականացման քարտ՝ 000617225, տրված 03.12. 2013, 003-ի կողմից
Հեռախոս՝ 091 66 76 94
Փոստային հասցե՝ 0041 ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 11 փող., 18/1 տուն
Էլեկտրոնային հասցե՝ Hovhannes-bagrati@mail.ru
9. Հավաքի ղեկավարի տվյալները՝
Ազգանուն, անուն, հայրանուն՝ Գասպարյան Վահե Քրիստափորի,
Անձնագիր՝ BA3570718, տրված 01.06.2021, 004-ի կողմից
Հեռախոս՝ 091541411
Փոստային հասցե՝ 0012 Երևան, Փափազյան 26 շ., բն. 24
Էլեկտրոնային հասցե՝ vahegasparyan@yahoo.com:

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը
2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ դեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով:

Առդիր՝ հավաքի կազմակերպչի նույնականացման քարտի լուսապատճենը՝ 1 թերթ:

Հավաքի կազմակերպիչ Հովհաննես Հովհաննեսյան